



Զեկույց

Ղարաբաղյան պատերազմից տուժածների (փախստականներ, նախկին
ռազմագերիներ, անհայտ կորածների ընտանիքներ) շրջանում իրականացված
մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

«Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորում» ծրագիրն իրականացվում
է Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ՝
ՀՔԱ ադրբեջանական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի «Հելսինկյան
նախաձեռնություն 92» ՀԿ համագործակցությամբ

Վանաձոր 2009



Լեռնային Ղարաբաղ

Անհայտ կորածներ

Հարցումն իրականացվել է հայ-ադրբեջանական պատերազմում ղարաբաղցի անհայտ կորած զինվորների 5 հարազատի շրջանում:

Նրանցից բոլորն ապրում են Ստեփանակերտում:

Հարցումներին մասնակցած անհայտ կորած զինվորների հարազատներից 3-ը բարձրագույն կրթություն ունեն, մեկը՝ թերի բարձրագույն, մյուսը՝ միջին կրթություն:

Նրանցից 3-ը ապահովված են աշխատանքով, 2-՝ ոչ:

Ապրուստի միջոցը

- աշխատավարձ՝ դրամատիկական թատրոնի տնօրեն
- աշխատավարձ՝ սոցիալական աշխատող
- երրորդը չի նշել, թե որտեղ է աշխատում

Հարցումներին մասնակցել են 2 ծնող, 3 անհայտ կորածի կին:

Ղարաբաղյան պատերազմում անհայտ կորած զինվորներից 4-ն ամուսնացած են, նրանցից 3-ն ունեն երեխաներ: Երեխաներն այժմ ապրում են իրենց մայրերի հետ: Անհայտ կորածի կանայք պետության կողմից ստանում են ֆինանսական օգնություն՝ ոչ թե որպես անհայտ կորածի կին, այլ զոհված ազատամարտիկի այրի: Որպեսզի անհայտների ընտանիքները օգտվեն պետության աջակցությունից, ստիպված են դատական կարգով մահացած ճանաչել նրանց:

Երեխաներից 4-ը ստանում են բարձրագույն կրթություն, սակայն նրանցից միայն մեկն է ստանում անվճար կրթություն՝ որպես զոհված ազատամարտիկի զավակ:

Հարցումներին մասնակցած անհայտ կորածների հարազատները հիմնականում դժգոհում են իրենց բնակարանային պայմաններից: Այդ բնակարանների մեծ մասը նորոգման կարիք ունեն, իսկ պետությունը ոչ մի աջակցություն չի դարձնում այդ հարցին:

Բնակարանային պայմանները

- սեփական տուն, 3 սենյակ, 46մ², նորոգման համար դիմել ենք քաղաքապետարան, բայց մեզ ասեցին, որ գումար չունեն
- 2 սենյականոց բնակարան
- փոքր բնակարան՝ մեծ ընտանիք, իհարկե վատ պայմաններ են
- 3 սենյականոց բնակարան՝ նորոգման կարիք ունի, դիմել էի քաղաքապետարան նորոգմանն աջակցելու համար, սակայն հայտնել էին, թե բնակարանը նորոգման կարիք չունի
- 3 սենյականոց բնակարան, վատ պայմաններ

Անհայտ կորչելու ժամկետները տարբեր են՝ 1992-1993թթ.:

Երբ է տեղի ունեցել անհետացումը (կոնկրետ ժամանակը, եթե հայտնի է)

- 1992թ. հունիսի 12-ին
- 1992թ. օգոստոսի 6-ին
- 1993թ. գարնանը
- 1993թ. սեպտեմբերի 4-ին
- 1993թ. սեպտեմբերին

Նրանք անհետացել են պատերազմի օրերին: Անհետացման մասին լուրը հարազատները ստացել են միանգամից՝ ընկերներից և հարևաններից:

Երբ և ումից էք իմացել անհետացման մասին

- հենց անհետացման օրը՝ ընկերներից
- անհետացումը տեղի է ունեցել Քեչան գյուղից, և մեզ ասացին հենց այդ գյուղի բնակիչները
- անհետացման հաջորդ օրը՝ ընկերներից
- հայտնել են գործընկերները
- իմացել ենք միանգամից. մեզ հայտնել է որդուս ընկերներից մեկը, ով կարողացել է փախչել

Նրանց փնտրման աշխատանքներով հիմնականում զբաղվել են ընտանիքի անդամները, ընկերները և Հայաստանի Պաշտպանության նախարարությունը:

Անհայտ կորածի հարազատները մինչև հիմա որևէ կոնկրետ տեղեկություն չունեն նրանց գտնվելու վայրի մասին: Անհետացումից ոչ շատ ուշ նրանք ունեին որոշակի տեղեկություններ, որոնք սակայն հետագայում հերքվեցին:

Ինչ տեղեկություններ էք ստացել անհետացումից հետո

- մեկ ամիս անց տեղեկություն կար, որ գտնվում է Բաքվում
- իմացանք, որ գտնվում է Կիրովաբադի հիվանդանոցում
- ոչ մի տեղեկություն

Հարցվողներից 2-ը 6 ամիս անց համապատասխան մարմիններից ստացել են փաստաթուղթ իրենց հարազատի անհետացման վերաբերյալ, իսկ 3-ը չեն ստացել: Անհայտ կորածներից 4-ը ճանաչվել են մահացած:

Նրանք պետությունից ստանում են որոշակի աջակցություն: Այսպես, օրինակ,



հարցվողներից մեկին տրամադրվել է անվճար բուժում, ինչպես նաև բոլորը ստանում են ամենամյա ֆինանսական օգնություն:

Հասարակության վերաբերմունքը անհայտ կորածի հարազատների նկատմամբ շատ բարյացկամ է և հոգատար:

Անհայտ կորածի հարազատները գտնում են, որ պետությունը չպետք է դադարեցնի որոնման աշխատանքները:

Ինչ քայլեր պետք է ձեռնարկի պետությունը խնդրի վերջնական լուծման համար

- պետությունը ամեն ինչ անում է, բայց հակառակ կողմը չի ցանկանում համագործակցել, դրա համար ոչ մի արդյունք չկա
- պետք է շարունակեն փնտրման աշխատանքները և բանակցություններ տարվեն
- համագործակցել Կարմիր Խաչի հետ
- համագործակցել Կարմիր Խաչի հետ, մշակել միասնական քայլեր նախկին ռազմագերիների և անհայտ կորածների խնդիրների լուծման վերաբերյալ

Անհայտ կորածի հարազատները որպես խնդրի լուծման տարբերակ առաջարկում են համագործակցել ՀԿ-ների հետ և պետությունից պահանջել վերանայել օրենքները, որոնք կապված են անհայտ կորածների հարազատների սոցիալական և առողջապահական խնդիրների լուծման հետ:

Եզրակացություն

Ղարաբաղյան պատերազմի հետեւանքով Լեռնային Ղարաբաղի եւ նրան հարակից բնակավայրերում /դրանք գտնվում են կամ Ադրբեջանական Հանրապետության տարածքում կամ պատերազմից հետո անցել են ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո/ անհայտ կորած մարդկանց թիվը հասնում է 780-ի, ընդ որում՝ նրանցից 400-ը խաղաղ բնակիչներ են:

Այս տվյալները մեզ է տրամադրել Լեռնային Ղարաբաղի «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» ՀԿ-ն: ՀԿ նախագահ Վերա Գրիգորյանը, ում որդին եւս անհայտ կորել է պատերազմի ժամանակ, անցած տարիներին հավաքագրելով անհայտների տվյալներն ու համախմբելով նրանց հարազատներին, Ստեփանակերտում ստեղծել է թանգարան: Վերա Գրիգորյանը՝ բացի թանգարանի ստեղծումից, նաեւ փորձում է լուծել անհայտ կորածների հարազատների սոցիալական խնդիրները:

Լեռնային Ղարաբաղում անհայտ կորածների հարազատների իրավական կարգավիճակը հավասարեցված է գոհվածների կարգավիճակին:

Ներկայումս անհայտ կորածների ընտանիքները Լեռնային Ղարաբաղում ամսական ստանում են 7.500 դրամ որպես կոմունալ վճարներ, նրանց երեխաները օգտվում են անվճար կրթական համակարգից: Այս աջակցությունից բացի, Լեռնային Ղարաբաղում



անհայտ կորածների ընտանիքները այլ բնույթի աջակցություն չեն ստանում: Մինչդեռ մեր հանդիպումները նրանց հետ հնարավորություն տվեցին սահմանել որոշակի ոլորտներում անհրաժեշտ աջակցության ասպեկտները.

- *հոգեբանական*- նրանք կարիք ունեն հոգեբանական աջակցության՝ վերականգնելու վստահությունը ինչպես իրենց, այնպես էլ հասարակության նկատմամբ, ձերբազատվելու միայնակի ու օգնականի վիճակից
- *սոցիալական*- անհրաժեշտ է սահմանել սոցիալական ապահովագրության մի այնպիսի համակարգ, որով հնարավոր կլինի աջակցել նրանց կոմունալ-կենցաղային խնդիրների լուծմանը, կենսաթոշակային հատուկ համակարգի ներդրմանը, գործազրկության նպաստի, աշխատանքի ընդունման արտոնությունների սահմանմանը
- *բնակարանային*- հարկ է աջակցել նրանց բնակարանային խնդիրների լուծմանը ինչպես բնակարանների ձեռքբերման, այնպես էլ նորոգման հետ կապված հարցերում
- *աշխատանքային*- անհայտների ընտանիքների անդամների համար հարկ է սահմանել աշխատանքի ընդունման արտոնություններ
- *իրավական*- հարկավոր է ապահովել նրանց կամ կնոջ, կամ ընտանիքի անդամի համար իրավահաջորդության դյուրացված համակարգ: